

ՀԱԿՈՔՅԱՆ ԼԻԱՆԱ

(ԼԻ)

ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ ՏԵՂԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայերենում տրական հոլովը աչքի է ընկնում իր գործառնությունների քաղաքականությամբ: Այն կարող է լինել հանգման խնդիր, մատուցման խնդիր, վերաբերության խնդիր, տեղի և ժամանակի պարագա: Մենք հակված ենք ենթադրելու, որ տրական հոլովի տեղի և ժամանակի գործառնությունները ավելի ուշ առաջացած երևույթներն են:

Ըստ Գ.Ա. Մելիքիշվիլու՝ քացի իր սովորական գործառնություններից, տրական հոլովը ուրարտերենում, ամենայն հավանականությամբ, օգտագործվել է նաև գործողության ժամանակը ցույց տալու համար, օրինակ՝ *ikukani šale* «նույն տարում», *šusine šale* «մեկ տարում», «մեկ տարվա ընթացքում»: Ուրարտերենում տրական հոլովը կատարել է նաև ներգոյական հոլովի գործառնություն, օրինակ՝ *terubi manini esini LUGAL-tuḫ ini* «ես դրեցի նրան քաղաքական տեղում» կամ *eršidubi kurbanuḫe* «տեղավորեցի ես (նրանց) իմ երկրում» և այլն²:

Կարելի է ենթադրել, որ ուրարտերենի և հայերենի երկարատև շփման ընթացքում տրական հոլովի տեղի և ժամանակի գործառնությունները անցել են հայերենին: Հօգուտ մեր այս ենթադրության է խոսում մի շարք փաստեր.

1. Լեզուների երկարատև շփման ընթացքում հոլովական իմաստները հեշտությամբ են անցնում մի լեզվից մյուսին.
2. Հնդեվրոպական լեզվաընտանիքի՝ հայերենին մոտ կանգնած լեզուների (հնդիրանական լեզուներ, հունարեն) հոլովական համակարգերի քննությունը ցույց է տալիս, որ տրական հոլովը, քացի հունարենից, մյուս լեզուներում ճշված իմաստներով չի գործածվում: Իսկ հունարենում էլ դա դեռևս հնդեվրոպական ընդհանրության ժամանակաշրջանից եկող «սինկրետիզմի» արդյունք է³:

3. Գրաբարում տրականը հանդես էր գալիս որպես

ա) մատուցման անողական խնդրի հոլով,

բ) որպես անորոշ դերբայի, ինչպես նաև պարտ է, մարք է և այլ անդեմ դարձվածների տրամաբանական ենթակայի հոլով,

գ) որպես որոշ բայերի և ածականների պահանջած խնդրի հոլով⁴:

Այսպիսով՝ այս և մի շարք այլ փաստեր, որոնք կներկայացնենք զեկուցման մեջ, հիմք են տալիս ենթադրելու, որ տրական հոլովի տեղի և ժամանակի գործառնությունները արտաքին ազդեցությամբ առաջացած երևույթներ են և ամենայն հավանականությամբ առաջացել են ուրարտերենի ազդեցությամբ՝ հայ-ուրարտական երկարատև շփման ընթացքում:

LIANA HAKOBYAN

(IL)

**UTILIZATION OF PLACE AND TENSE IN DATIVE CASE IN
ARMENIAN**

In our report we summarize the place and tense utilization of the Dative case in Armenian. We inclined to assume that the mentioned utilization of the Dative is later arisen phenomenon. It could probably arise upon the influence of Urartian (during the prolonged contact of Urartian and Armenian) as, according to G. Melikishvili, Dative of Urartian has the same meaning. In favour of this assumption speaks for the facts that:

1. During the prolong contact of the languages the meanings of the cases easily move from one language to another.
2. The mentioned meaning of the dative didn't appear in the Indo-European languages close to Armenian.
3. In Grabar (ancient Armenian) this utilization of Dative also did not take place.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Меликишвили Г.А., Урартские клинообразные надписи, Москва, 1960, с. 57.
2. Шантрен П., Историческая морфология греческого языка", Москва, 1952, с. 24-25.
3. Ջահուկյան Գ.Բ., Հին հայերենի հոլովման սխստեմը և նրա ծագումը, Երևան, 1967, էջ 129.